

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական տեսչության կողմից 2016 թվականի առաջին կիսամյակում կատարած աշխատանքների մասին

Հաշվետու ժամանակաշրջանում՝ 2016 թվականի առաջին կիսամյակում, համաձայն ՀՀ կառավարության 17.09.2009թ թիվ 1066-Ն որոշմամբ Գնիշիկի Գետափի, Ռինդի, Աղավնաձորի, Վերնաշենի, Արփի, Գնդեվազի և Ազատեկի համայնքներում՝ բաժնի հետևողական աշխատանքների արդյունքում կատարվել են համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություն՝ ցածրարժեքից բարձրարժեքի՝ փոփոխության են ներկայացվել 217.1 հա, որից փոփոխվել է խաղողի այգի 104.8 հա , պտղատու այգի 112.3 հա, որն էլ արձածվել է մարզի 2016 թվականի հողային հաշվեկշռում: Այս գործընթացը շարունակվում է:

Միջգերատեսչական հանձնաժողովին է ներկայացվել համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում փոփոխություններ կատարելու 24 առաջարկություններ, որից 22-ին հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն՝ հողերի նպատակային նշանակությունը փոխվելու վերաբերյալ, որոնք էլ սահմանված կարգով փոխանցել ենք համայնքի ղեկավարներին, մնացած 2-ը ընթացքի մեջ են:

ՀՀ հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն, մարզպետի կարգադրությամբ տեսչական ստուգումներ են կատարվել մարզի 7 համայնքներում, հայտնաբերված թերությունների վերացման համար հստակ ժամկետ է տրվել:

Հետևողական ենք եղել, որպեսզի համայնքների կողմից հողերի օտարման և վարձակալությամբ տրամադրման աշխատանքները իրականացվեն՝ ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Համաձայն ՀՀ կառավարության 14.01.2010 թվականի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված կարգի ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ենք ներկայացրել ա/ Եխեզնաձորի, Վարդահովիտի, և Հերմոնի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարում, որոնց վերաբերյալ տրվել են դրական եզրակացություն:

Բաժինը ստացել է 11-ը քաղաքացիներից դիմումներ, բոլոր դիմումներին օրենքով սահմանված կարգով ընթացք ենք տվել:

Հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական

տեսչության պետ

Մ. Մեսրոպյան